



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» դեկտեմբերի 2017 թվականի N: 152 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթով, և ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 01/15.1/8002-17 հանձնարարականի.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում իրականացնել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառում:
2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում կատարելու նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման աշխատանքներին աջակցող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) 2018 թվականի հունվարի 1-ից 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը, և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Շիրակի մարզի տարածաշրջանային բաժիններին,

2) հաշվառման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում մասնակից դարձնել համայնքը սպասարկող անասնաբույժ մասնագետներին:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Հարություն Արշակյանին:

Իսկականի հետ ճիշտ է



Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Մանուկյան Մովսես Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ,
- Մարգարյան Աննա Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Շիրակի մարզային գործակալության պետ, անդամ /համաձայնությամբ/,
- Նալբանդյան Անդրանիկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, անդամ,
- Պողոսյան Սիմոն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առետուրային կազմակերպության Շիրակի մարզային կենտրոնի տնօրեն, անդամ /համաձայնությամբ/,
- Պետրոսյան Վարդան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
- Անանիկյան Տիգրան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
- Ավետիսյան Սուրեն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
- Սերոբյան Վանիկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
- Հովհաննիսյան Վաղինակ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
- Վարձեյան Արամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ, անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎԱՎԱՐ



Խ. ՊՈՂՈՍՅԱՆ